ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1955 Общественные науки

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ — «ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅ ԱԶԳԸ»

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հրատարակել է պատմ. գիտ. թեկնածու Ա. Մ. Հակոբյանի «Սոցիալիստական հայ ազգը», գիտա-մասսայական բնույթի բրոշյուրը։

Այդ բրոշյուրում հեղինակը փորձել է հանրամատչելի ձևով շարադրել սոցիալիստական հայ ազգի կազմավորման և զարգացման պատմա-տնտեսական պրոցեսը։ Հեղինակը նախ տալիս է ազգային հարցի մարքս-լենինյան բմբռնումը, ելնելով տեսական այն ճիշտ մեկնակետից, որ ազգային հարցը մարքսիստական ուսմունքի կարևոր հարցերից մեկն է։ Այդ հարցը հանդիսացել է պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարական դիկտատուրայի բաղադրիչ մասը։

Հայտնի է, որ ազգային հարցը պատմության ընթացքում եղել է զորդյան հանդույց, որը շուրջը պտտվել են բուրժուական բազմաթիվ մտածողներ և չեն կարողացել տալ այդ հարցի լուծումը։ Այդ հարցի դիտական լուծումը առաջին անգամ տվեցին դիտական կոմունիզմի մեծ հիմնադիրներ Մարքսը և Էնգելսը։ Ազգային հարցի լուծումը, ինչպես նկատում է բրոշյուրի հեղինակը, Մարքսը և Էնգելսը սերտորեն կապեցին շահագործող դասակարգերի դեմ պրոլետարիատի կողմից մղվող ռևոլյուցիոն պայքարի հետ։ Ազգերի միջև նորմալ փոխհարաբերությունների, նրանց միջև եղած անվստահության վերացման, մեկը մյուսի վրա գերիշխելու հնարավորության վերացման հարցը և ժողովուրդների միջև իրավահավասարություն և եղբայրական համագործակցություն ստեղծելու հարցը Մարքսը և Էնգելսը կապում էին արդի կապիտալիստական հարաբերությունների վերացման հետ, աշխատավորների տիրապետություն ստեղծելու հարցի հետ։ Ազգային հարցը պրոլետարիատի համար հանդիսացել է նրա ռևոլյուցիոն դաշնակցի հարց։ Այս թեզից ելնելով էր, որ Լենինը նշեց՝ Մարքսը գիտեր, որ «... բոլոր ազգություններին լիակատար ազատություն միայն բանվոր դասակարգի հաղթանակը կարող է տալ»[1]։

Երկրորդ՝ բրոշյուրի հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես Մարքսը և Էնգելսը ազգային հարցը համարելով բանվորական հարցի անբակտելի մասը միաժամանակ այդ հարցին նրանք մոտեցել են ինտերնացիոնալիզմի դիրքերից։

Մարքսը և Էնգելսը, գրում է հեղինակը, բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի առաջին պլանի վրա են բաշել ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի արմատական սկզբունքը։ Նրանք ուրվագծել են ժողովուրդների եղբայրական համագործակցության և իրավահավասարության ուղիները։ Նրանք գտնում էին, որ չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, որը ճնշում է ուրիշ ժողովուրդների։ Դժբախտություն է մի ժողովրդի համար, եթե նա սարկացել է մի ուրիշ ժողովրդի։ Մարքսը և Էնգելսը դեռևս այն ժամանակ ասում էին, որ բանվոր դասակարգն Անգլիայում չի ազատագրվի, մինչև որ Իռլանդիան չազատագրվի անգլիական ճնշումից։ Անգլիայում ռեակցիան ամրանում և սնվում է Իռլանդիայի ստրկացմամբ (ինչպես որ Ռուսաստանում ռեակցիան սնվում էր Ռուսաստանի կողմից մի շարք ազգերի ստրկացմամբ)։

Հեղինակը իր բրոշյուրում ցույց է տալիս, որ Մարքսը և Էնգելսը, լինելով հետևողական ինտերնացիոնալիստներ, անողոք պայքար էին մղում բուրժուական նացիոնալիզմի բոլոր արտահայտությունների դեմ։ Նրանք խարազանեցին գերմանական, այսպես կոչված, «ճշմարիտ սոցիալիստներին», որոնք գերմանական ազգը «ընտրյալ» ազգ էին համարում, նրան «բարձր» դասելով մյուս բոլոր ազգերից, դրանով իսկ փորձում էին նացիոնալիզմի թույնը տարածել գերմանական բանվորների մեջ։ Մարքսը և Էնգելսը ջախջախեցին նաև պրուդոնիզմը և լասսալականությունը, որոնք ազգային հարցում ևս հանդիսանում էին մարքսիզմի թշնամիները։ Վ. Ի. Լենինը ասում է, որ Մարքսը և Էնգելսը կանգնած էին

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 20, էջ 550։

այն տեսակետի վրա, որ «Բանվոր դասակարգի և կապիտալիզմի դեմ նրա մղած պայքարի շահերը պահանջում են բոլոր ազգերի բանվորների լիակատար համերաշխություն և ամենասերտ միասնություն, պահանջում են հակահարված տալ անխտիր բոլոր ազգությունների բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականությանը»[1]:

Գրքի հեղինակը համառոտ գծերով խոսում է նաև այն մասին, որ Մարքսից և Էնգելսից հետո, ինչպես մարքսիզմի բոլոր հիմնական հարցերը, նույնպես և ազգային հարցը պատմական նոր պայմաններում՝ իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների էպոխայում խորապես և բազմակողմանիորեն մշակեց և զարգացրեց համաշխարհային բանվոր դասակարգի մեծ ուսուցիչ և առաջնորդ, Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի հիմնադիր Վ. Ի. Լենինը։

Ընկ. Ա. Հակոբյանը մատնանշում է, որ Լենինը հանճարեղ կերպով մշակեց Կոմունիստական պարտիայի թեորիան և ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ։ Ըստ երևույթին տեղի սղության պատճառով բրոշյուրի հեղինակը չի կարողացել հարկ եղածին չափ կանգ առնել տեսական-սկզբունքային այն հիմնական հարցերի վրա, որոնք հանդիսանում են Լենինի ավանդը ազգային հարցում։

Ի. Վ. Ստալինը «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատության մեջ հիմնական գծերով տվել է դրանք։ Նա ասում է, որ «Ազգային հարցը II Ինտերնացիոնալի ժամանակաշրջանում և ազգային հարցը լենինիզմի ժամանակաշրջանում բնավ միևնույնը չեն։ Նրանք խորապես տարբերվում են իրարից ոչ միայն ծավալով, այլև իրենց ներքին բնույթով»[2]։ Երկրորդ Ինտերնացիոնալի լիդերները ազգային հարցը դիտել են միշտ շատ սեղմ շրջանակներում, նրանք այն համարել են Եվրոպայի մի քանի ազգությունների «կուլտուրական» իրավունքների հարց, աչքաթող անելով Ասիայի ու Աֆրիկայի բազմամիլիոն ժողովուրդների ճնշման և գաղութային ստրկացման դաժան փաստը։ Լենինիզմը, հակառակ երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիզմի, ազգային հարցը մասնավոր ու պետական ներքին հարցից դարձրեց միջազգային ընդհանուր հարց։ Նա ազգային հարցը կապեց գաղութների հարցի հետ. նա այն դարձրեց կախյալ և գաղութային երկրների ճնշված ժողովուրդների իմպերիալիզմի լծից ազատելու համաշխարհային հարց։

Գրքույկի հեղինակը հիշատակում է, որ ազգային հարցի հետագա մշակողն ու զարգացնողը հանդիսացավ Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ, նրա գործի մեծ շարունակող Ի. Վ. Ստալինը։ Այս մասում հետազոտելով Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» (1913) և «Ազգային հարցը և լենինիզմը» (1929) աշխատությունները, հեղինակը իրավացիորեն նկատում է, որ այդ կլասիկ գործերը հանդիսանում են ստեղծագործական մարքսիզմի փայլուն օրինակներ։

Խոսելով Ի.Վ. Ստալինի խոշոր գերի մասին մարքսիզմի ազգային թեորիայի զարգացման ուղղությամբ, գրքույկի հեղինակը իրավացիորեն նշում է, որ Ի. Վ. Ստալինի «Ազգային հարցը և լենինիզմը» կլասիկ աշխատությամբ մարքսիստական-լենինյան գրականության մեջ առաջին անգամ առաջ է քաշվել նոր, սոցիալիստական ազգերի հարցը և ստեղծվել է ամբողջական թեորիա սոցիալիստական ազգերի կազմավորման և զարգացման մասին։

Ի. Վ. Ստալինի հիշյալ աշխատության մեջ ցույց է տրված, թե որոնք են եղել սոցիալիստական նոր ազգերի առաջացման և զարգացման պատմական օբյեկտիվ պայմանները, այդ ազգերի սոցիալական բնույթն ու էությունը, նրանց տարբերությունը բուրժուական ազգերից։ Այդ աշխատության մեջ գիտականորեն ցույց է տրված այն, թե որոնք են լինելու այդ ազգերի համաշխարհային զարգացման պատմական ուղիներն ու էտապները։

Մարքսիզմի ազգային թեորիայի հիման վրա հեղինակը գրքույկի առաջին մասում թռուցիկ գծերով խոսում է նաև հայ բուրժուական ազգի ծագման հարցի մասին։ Տեսական այս ընդհանուր հարցերը շոշափելուց հետո գրքույկի երկրորդ մասում հեղինակը անցնում է սոցիալիստական հայ ազգի կազմավորման և զարգացման հիմնական հարցին։ Նա ցույց է տալիս, որ սոցիալիստական հայ ազգի կազմավորման պրոցեսը ինքնաբավ երևույթ չէ, այն պետք է դիտել Սովետական Միության սոցիալիստական բոլոր ազգերի

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 20, էջ 528—529։

[2] Ի. Վ. Ստալին. Երկեր, հատ. 6, էջ 160։

առաջացման և զարգացման պատմական ընդհանուր ֆոնի վրա, քանի որ սոցիալիստական հայ ազգի կազմավորման պրոցեսը հանդիսանում է Սովետական Միության սոցիալիստական մյուս ազգերի առաջացման ընդհանուր պրոցեսի օրգանական մի օղակը։ «Այդ պրոցեսը չի կարելի պատկերացնել,— գրում է հեղինակը,—և նրա մասին ճիշտ հետևությունների հանդել՝ առանց այն դիտելու Սովետական Միության ընդհանուր հաջողությունների և սոցիալիստական մյուս ազգերի ծաղման ու զարգացման հետ սերտորեն շաղկապվածության, առանց նկատի առնելու ռուս մեծ ժողովրդի դլխավորությամբ սովետական ժողովուրդների անխախտ բարեկամությունը և եղբայրական համագործակցությունը» (էջ 21)։

Ընկ. Ա. Հակոբյանը՝ խոսելով սոցիալիստական հայ ազգի կազմավորման պատմատնտեսական պրոցեսների մասին, միաժամանակ կանգ է առնում ընդհանրապես սոցիալիստական ազգերի կազմավորման հարցի հետ կապված մի քանի տեսական խնդիրների վրա։

Այսպես, օրինակ՝ հեղինակը ճիշտ կերպով նկատում է, որ «Սովետական Միությունում սոցիալիստական ազգերի, այդ թվում նաև սոցիալիստական հայ ազգի ձևավորումը նշանակում էր արմատական հեղաշրջում այդ ազգերի պատմության մեջ, թռիչք հին որակից՝ բուրժուական ազգից դեպի նոր որակը՝ սոցիալիստական ազգը» (էջ 37)։ Այդ թռիչքը կատարվեց ոչ թե պայթյունի միջոցով, այլ աստիճանաբար։ Ինչ խոսք, որ այդ աստիճանական անցումը կատարվեց ոչ հաշտ ու խաղաղ ճանապարհով, այլ ներքին հակասությունների պայքարի ճանապարհով։

Երկրորդ, ի տարբերություն բուրժուական ազգերի կազմավորման ավելի երկարատև պրոցեսի, մեզ մոտ սոցիալիստական ազգերը կազմավորվեցին պատմական շատ ավելի կարճ ժամանակաընթացքում։

Բուրժուական ազգերի կազմավորման պրոցեսը տևեց հարյուրամյակներ, իսկ սոցիալիստական ազգերի կազմավորման պրոցեսն ավարտվեց մեկ-երկու տասնամյակի ընթացքում։

Ընկ. Հակոբյանը գրում է. «Սովետական երկրում սոցիալիստական ազգերի կազմավորումը տեղի ունեցավ երկու ճանապարհով, մեկ կողմից հին, բուրժուական ազգերի բազայի վրա, մյուս կողմից՝ այն ժողովուրդների և ազգագրական խմբերի բազայի վրա, որոնք մինչև սովետական կարգերի հաստատումը դեռևս չէին ձևավորվել որպես ազգեր» (էջ 38)։ Այստեղ հեղինակը, ըստ երևույթին, նկատի ունի ՍՍՌՄ այն ժողովուրդներին, որոնք նախքան սովետական կարգերի հաղթանակը դեռևս չէին կազմավորվել որպես բուրժուական ազգեր, իսկ սովետական կարգերի հաստատմամբ նրանք շրջանցեցին կապիտալիստական զարգացման ստադիան և անմիջապես թևակոխեցին սոցիալիստական ստադիան և ձևավորվեցին որպես սոցիալիստական ազգեր։ Հայերը սոցիալիստական ազգ դարձան բուրժուական հայ ազգի բազայի վրա։ Սոցիալիստական հայ ազգի ծաղման օբյեկտիվ հիմունքները հանդիսացան քաղաքական, տնտեսական և կուլտուրական այն վերափոխությունները, որոնք տեղի ունեցան հայ ժողովրդի կյանքում Հայաստանում սովետական կարգերի, պրոլետարական դիկտատուրայի հաստատման շնորհիվ։ Ինչպես սովետական բոլոր ազգերը, այնպես էլ հայերը սոցիալիստական ազգ դարձան ոչ ինքնաբերաբար։ ՍՍՌՄ-ում նախկին բուրժուական ազգերը ձևափոխվեցին սոցիալիստականի միայն և միմիայն շնորհիվ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ազգային ճիշտ քաղաքականության, սոցիալիստական էկոնոմիկայի բազայի վրա, սոցիալիստական շինարարության հաղթանակի հիման վրա։ Ճիշտ է նկատում հեղինակը, որ մեր երկրում սոցիալիստական ազգերի կազմավորման և զարգացման պրոցեսը մեկ միասնական ընդհանուր պրոցես է եղել, որովհետև նրանց բոլորի համար գոյություն է ունեցել տնտեսական կյանքի ընդհանրություն։ Արտադրության միջոցների սոցիալիստական սեփականության վրա հենված այդ տնտեսական ընդհանրությունը բացառում է ազգային խտրականության կամ ճնշման որևիցե հնարավորություն, բացառում է ազգային թշնամանքն ու անվստահությունը։ Ընդհակառակը, սոցիալիստական արտադրական հարաբերություններն իրենց հետ բերեցին նաև ազգային նոր հարաբերություններ, ժողովուրդների և ազգերի եղբայրական համագործակցության, փոխադարձ օգնության և աջակցության հարաբերություններ, ինտերնացիոնալ հարաբերություններ, որոնք բխում են և խարսխվում են սոցիալիստական բոլոր ազգերի բանվորների և գյուղացիների եղբայրական ամուր դաշինքի վրա։ Ի. Վ. Ստալինը, խոսելով Սովետական Միության սոցիալիստական նոր ազգերի մա-

սին, ասում է, որ նրանք արմատապես տարբերվում են հին, բուրժուական ազգերից ինչպես իրենց դասակարգային կազմով և հոգևոր կերպարանքով, այնպես էլ իրենց սոցիալ-քաղաքական շահերով և ձգտումներով։ Նա ասում է, որ այդ նոր ազգերը զերծ են բուրժուական ազգերին մաշող անհաշտելի դասակարգային հակասություններից և անհամեմատ ավելի համաժողովրդական են, քան որևէ բուրժուական ազգ։ Սոցիալիստական ազգերի իդեոլոգիան ձևավորվեց կոմունիստական պարտիայի դաղափարների՝ Մարքս-Լենինյան ուսմունքի հիման վրա։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը, ժողովուրդների եղբայրական բարեկամությունը և սովետական ջերմ հայրենասիրությունը հանդիսանում են սոցիալիստական նոր ազգերի դաղափարախոսության հիմնական դծերը։

Խոսելով սոցիալիստական ազգերը բնորոշող դծերի մասին ընկ. Ա. Հակոբյանը ցույց է տալիս, որ Ի. Վ. Ստալինի կողմից դեռևս 1913 թ. այդ հասկացողության մասին տրված կլասիկ բնորոշումը լիակատար կերպով վերաբերվում է նաև սոցիալիստական ազգերին։ «Ազգային հարցը և լենինիզմը» աշխատության մեջ Ի. Ստալինը ասում է, որ «Ռուսական մարքսիստները վաղուց արդեն ունեն ազգի իրենց թեորիան։ Ըստ այդ թեորիայի ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է, որ ծագել է չորս հիմնական հատկանիշների ընդհանրության՝ բազայի, այն է՝ լեզվի ընդհանրության, տերիտորիայի ընդհանրության, տնտեսական կյանքի ընդհանրության և ազգային կուլտուրայի սպեցիֆիկ առանձնահատկությունների ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության բազայի վրա»[1]։

Նկատելով ազգ հասկացողության մարքսիստական այս թեզից, ընկ. Ա. Հակոբյանը փորձել է ցույց տալ, թե հայ ազգը բնորոշող այդ չորս էլեմենտները ինչ կարգի փոփոխությունների են ենթարկվել սովետական շրջանում։ Հեղինակին, սակայն, չի հաջողվել այդ անալիզը խորացնել և մանրամասն ցույց տալ այդ փոփոխությունների որակական և քանակական բնույթը։

Գրքի երրորդ մասում հեղինակը տալիս է սոցիալիստական հայ ազգի զարգացման կուլտուր-տնտեսական ընթացքը սովետական շինարարության տարիներին։ Նա ցույց է տալիս, որ Սովետական Միության ընդհանուր վերելքին զուգընթաց, առանձնապես արագ տեմպերով զարգացան և առաջ ընթացան ազգային սովետական ռեսպուբլիկաներն ու ծայրամասերը, որոնք նախահեղափոխական շրջանում հանդիսանալով ցարիզմի զաղութները, Ռուսաստանի կենտրոնական մարզերի համեմատությամբ զտնվում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա» (էջ 65—66)։

Սովետական ազգային մյուս ռեսպուբլիկաների հետ միասին Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան անցած 35 տարիների ընթացքում դարձավ զարգացած սոցիալիստական արդյունաբերության և առաջավոր գյուղատնտեսության երկիր։ Շնորհիվ ռուս մեծ ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնության նախկին Ռուսաստանի ճնշված ժողովուրդները պատմական կարճ ժամանակաընթացքում վերացրին իրենց դարավոր կուլտուր-տնտեսական հետամնացությունը և դարձան առաջավոր սոցիալիստական ազգեր։ Ռուս մեծ ժողովուրդը այն վճռական ուժն էր, որի ղեկավարությամբ Սովետական բոլոր ազգերը համախմբվեցին կոմունիզմի կառուցման անխորտակելի դրոշի տակ և Կոմունիստական իմաստուն պարտիայի առաջնորդությամբ նրանք, հաղթահարելով ներքին և արտաքին դժվարությունները, հաստատուն քայլերով քայլում են դեպի կոմունիստական երջանիկ հասարակարգը։ Եթե հին բուրժուական ազգերի կուլտուրան միատարր ու համաժողովրդական չէր, նա ներկայացնում էր այդ տզրի ներսում եղած տարբեր հակամարտ դասակարգերի կուլտուրան, ապա սոցիալիստական նոր ազգերի, ինչպես նաև սոցիալիստական հայ ազգի այսօրվա կուլտուրան համաժողովրդական և համազգային կուլտուրա է։ Այդ ստեղծվեց շնորհիվ այն բանի, որ մեզանում բարգավաճեցին ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի բոլոր ճյուղերը և բնագավառները։

Գրքույկի հեղինակը բավական հարուստ փաստերի հիման վրա ցույց է տալիս, թե ինչպես սովետական բազմազգ ժողովուրդների ջերմ ընտանիքում օրեցօր ծաղկում և բարգավաճում է սոցիալիստական հայ ժողովրդի գիտությունը, արվեստը, դրականությունը։ Հեղինակը ցույց է տալիս, որ այս ամենի մեջ ամենախոսուն նվաճումը պետք է

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 379—380։

համարել այն, որ սոցիալիստական շինարարության տարիներին ոչ միայն փոխվեց երկրի տնտեսական և կուլտուրական դեմքը, այլև արմատապես փոխվեց ժողովուրդը, հոգեպես վերափոխվեցին մարդիկ, նրանց հոգերանությունը, գաղափարախոսությունը։ Նրանք ձեռք բերեցին բարոյաքաղաքական նոր գծեր և հոգևոր նոր նկարագիր։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բնորոշ կողմերից մեկն էլ այն էր, որ նա արմատական բեկում առաջացրեց մարդկանց գիտակցության, նրանց մտքերի և զգացմունքների մեջ։ Սովետական ժողովուրդներն այսօր այն չեն, ինչ որ էին նրանք նախքան ռևոլյուցիան և սովետական կարգերի հաղթանակը։ Եթե հայերը նախքան սովետական կարգերը բուրժուական ազգ էին և նրանց համար տիրապետող գաղափարախոսությունը և կուլտուրան բուրժուական էին թե ձևով և թե բովանդակությամբ, ապա այսօր հայ ժողովրդի գաղափարախոսությունը մարքսիզմ-լենինիզմն է, սոցիալիստական կուլտուրան, որը աճել և դարգացել է բուրժուական նացիոնալիզմի դեմ մղած անհաշտ և հետևողական պայքարի ընթացքում։

Ընկ. Ա. Հակոբյանը առաջ քաշելով և ճիշտ լուծում տալով հար և նման հարցերին, գրել է մի հետաքրքիր աշխատություն, որտեղ հանրամատչելի ձևով շարադրված է սոցիալիստական հայ ազգի կազմավորման և բարդավաճման կարևոր պրոբլեմը։

Վ. Ղ.